

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱԶՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հաստատված է ամբիոնի նիստում

Քիմիայի և կենսաբանության

ամբիոնի անվանումը

Ամբիոնի վարիչ Ղազարյան Արմինե Հրաչիկի /Ա. Ա. Հ./

Արձանագրություն № 11

«19» հունվար-2026թ.

ՔԿ/Բ-167- Կ/Պ-ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՂԱԲՈՒՅՄԵՐ ԴԱՍԸՆԹԱՑԻ

Դասիչ, դասընթացի անվանում

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՓԱԹԵԹ

| | |
|----------------------|--|
| Մասնագիտություն` | <u>011401.00.6 Մասնագիտական մանկավարժություն</u> /դասիչ, մասնագիտության լրիվ անվանումը/ |
| Կրթական ծրագիր` | <u>011401.01.6 Կենսաբանություն</u> /դասիչ, կրթական ծրագրի լրիվ անվանումը/ |
| Որակավորման աստիճան` | <u>Մանկավարժության բակալավր</u> /բակալավր, մագիստրատուրա/ |
| Ամբիոն` | <u>Քիմիայի և կենսաբանության</u> /ամբիոնի լրիվ անվանումը/ |
| Ուսուցման ձևը` | <u>Առկա</u> /առկա, հեռակա/ |
| Կուրս/կիսամյակ | <u>4-րդ կուրս, 2-րդ կիսամյակ</u> |
| Դասախոս(ներ)` | <u>Գայանե Սահակյան</u> /անուն, ազգանուն/ |
| Էլ. հասցե/ներ | <u>gaytig999@yandex.ru</u> |

Վանաձոր- 2026թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

| | |
|---|----|
| 1. Դասընթացի դերը և տեղը կրթական ծրագրում | 3 |
| 2. Դասընթացի նպատակը և խնդիրները | 3 |
| 3. Դասընթացին մասնակցելու նախնական մուտքային գիտելիքները, կարողությունները և հմտությունները /դասընթացները/ | 3 |
| 4. Դասընթացը ձևավորում է հետևյալ կրթական վերջնարդյունք(ներ)ը և /կամ կոմպետենցիաները | 3 |
| 5. Դասընթացի դերը կրթական ծրագրի շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման հարցում ըստ աշխատաշուկայի պահանջների | 4 |
| 6. Դասընթացի ծավալը, ուսումնական աշխատանքի տեսակները, արդյունքների ամփոփման ձևերը | 5 |
| 7. Ուսումնական աշխատանքների տեսակները | 5 |
| 8. Դասավանդման մեթոդներ | 6 |
| 9. Ուսումնառության մեթոդներ | 6 |
| 10. Դասընթացի համառոտ բովանդակությունը, ուսումնական աշխատանքի ծավալը՝ ըստ բաժինների և թեմաների | 7 |
| 11. Ուսումնամեթոդական գրականության ապահովման քարտ | 7 |
| 12. Դասընթացի ուսումնամեթոդական քարտ | 8 |
| 12.1. Դասախոսությունների ուսումնամեթոդական քարտ | 8 |
| 12.2. Գործնական աշխատանքների ուսումնամեթոդական քարտ Ошибка! Закладка не определена. | |
| 12.3. Ինքնուրույն աշխատանքների ուսումնամեթոդական քարտ | 13 |
| 13. Դասընթացի նյութատեխնիկական միջոցների ապահովում | 18 |
| 14. Գնահատում | 19 |
| 14.1. Գիտելիքների ստուգման և գնահատման բաղադրիչներ | 19 |
| 14.2. Ուսանողների գիտելիքների ստուգում | 19 |
| 14.3. Հարցաշար | 19 |
| 14.4. Գնահատման չափանիշները | 20 |
| ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐԻՉ | 22 |

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

1. Դասընթացի դերը և տեղը կրթական ծրագրում¹. «Հայաստանի դեղաբույսեր» դասընթացը կարևորվում է կենսաբանության բնագավառում մասնագետների պատրաստման գործընթացում և համարվում է կրթական ծրագրի ոչ հիմնական բաղադրիչներից մեկը, ներառված է «011401.01.6» - Կենսաբանություն կրթական ծրագրի ուսումնական պլանի կամընտրական դասընթացների կրթամասում:

2. Դասընթացի նպատակը և խնդիրները.

2.1 Դասընթացի նպատակն է.

«Հայաստանի դեղաբույսեր» դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել գիտելիքներ Հայաստանում հանդիպող դեղաբույսերի վերաբերյալ, այդ բույսերի օգտակարության նաև վնասակարության վերաբերյալ, քանի որ դեղաբույսերի մեջ պարունակվում են տարբեր քիմիական նյութեր, որոնք կարող են հակացուցված լինել, նաև ծանոթացնել այդ դեղաբույսերի աճելավայրի, և հավաքման ժամանակահատվածների հետ, այն չորացնելու և որպես դեղաբույսային հումք պատրաստելու հետ:

2.2 Դասընթացի խնդիրներն են.

Սովորեցնել Հայաստանի դեղաբույսեր առարկայի տեսական հիմքերը, բացատրել օրինաչափությունները, ամրապնդել ուսանողների կողմից ձեռք բերված տեսական գիտելիքները լաբորատոր և գործնական պարապմունքներով: Նաև սովորեցնել ուսանողներին կարողանալ տարբերել մեր երկրում հանդիպող դեղաբույսերը, կարողանալ ճիշտ պատրաստել այդ բույսերից դեղաբույսային հումք, դրանք ճիշտ պահպանել և օգտագործել ճիշտ քանակությամբ:

3. Դասընթացին մասնակցելու նախնական մուտքային գիտելիքները, կարողությունները և հմտությունները /դասընթացները/ «Հայաստանի դեղաբույսեր» դասընթացին մասնակցելու կարևոր նախապայման է ուսանողների բուսաբանությունից, կենսաբանությունից, քիմիայից ունեցած որոշակի գիտելիքների և հմտությունների առկայությունը:

4. Դասընթացը ձևավորում է հետևյալ կրթական վերջնարդյունք(ներ)ը² և /կամ կոմպետենցիաները.

«Հայաստանի դեղաբույսեր» դասընթացի ուսումնասիրման արդյունքում ուսանողի ակնկալվող վերջնարդյունքներն են.

4.1. Պետք է գիտենա. (Տեսական գիտելիքներ)

- Հայաստանում տարածված դեղաբույսերի մասին,
- դեղաբույսերում առկա կենսաբանական ակտիվ նյութերի մասին:
- տվյալ դեղաբույսը որ դեպքում է կարելի օգտագործել:
- պետական միջոցառումների համակարգի՝ դեղաբույսերի ռացիոնալ օգտագործման և պահպանության ուղղությամբ;
- գիտական տվյալներ բժշկության մեջ օգտագործվող դեղաբույսերի տարածման արեալների մասին;
- դեղաբույսերի հումքային բազայի, կենսաբանական ակտիվ նյութերի կուտակման վրա

¹ Ներկայացվում է դասընթացի կարևորությունը տվյալ կրթական ծրագրի խնդիրների լուծման հարցում և տեղը ուսումնական պլանում ըստ կրթաբլոկների

² <http://www.vsu.am/karg/ararkayakan-nkaragir-17.pdf>

Լրացվում է «Առարկայի նկարագրի մշակման ռազմավարության» կոմպետենցիաների ցանկին համապատասխան:

ազդող էկոլոգիական գործոնները;

- դեղաբույսերի հետ աշխատելիս անվտանգության տեխնիկայի կանոնները;

4.2. Պետք է կարողանա (Բուն մասնագիտական գործնական կարողություններ)

- դասակարգել դեղաբույսերը ըստ իրենց մեջ պարունակվող նյութերի

- դեղաբույսերի մասին ունեցած գիտելիքները կիրառել պրակտիկ գործունեության մեջ,

- հանձնարարված գրականության հիման վրա կազմել ռեֆերատներ

- ձեռք բերած տեսական գիտելիքները կիրառել գործնականում

- տիրապետել դեղաբույսերի ֆիզիոլոգիական գործընթացների ուսումնասիրման մեթոդներին,

- կատարել դեղաբույսերի ֆիզիոլոգիական գործընթացների ուսումնասիրման փորձեր,

- որոշել հերբարիումային և կենդանի դեղաբույսերը նրանց մորֆոլոգիական հատկանիշներով;

- դեղաբույսերից պատրաստել ջրաթուրմ, եփուկ, ոգեթուրմ, հանուկ և այլն:

4.3. Պետք է տիրապետի

- դեղաբույսերի չորացման և հավաքման մեթոդներին,

- դեղաբույսերի օգտակարության և հակացուցումների մասին տեղեկություններին,

- դեղաբույսերի բնագավառում գործնական հմտություններին,

- փորձարարական աշխատանքների կատարման մեթոդներին,

- բնական միջավայրում և մշակության մեջ աճող դեղաբույսերի կենսաբանական, էկոլոգիական հատկություններին վերաբերվող գիտելիքներին:

Դասընթացի ուսումնասիրման արդյունքում ուսանողը ձեռք կբերի հետևյալ կոմպետենցիաները.

Ա) Ընդհանրական կոմպետենցիաներ

Գործիքային կոմպետենցիաներ (ԳԿ)

ԳԿ1 ձեռք կբերի վերլուծելու և սինթեզելու ունակություն

ԳԿ2 կունենա կազմակերպելու և պլանավորելու ունակություն

ԳԿ3 կստանա մասնագիտական ոլորտի գիտելիքների հիմունքներ

ԳԿ6 ձեռք կբերի ստացած գիտելիքները գործնականում կիրառելու կարողություն

Համակարգային կոմպետենցիաներ (ՀԳԿ)

ՀԳԿ1 գիտելիքները գործնականում կիրառելու կարողություն

ՀԳԿ 2 հետազոտական կարողություն

ՀԳԿ 3 ուսումնասիրության կարողություն

Բ) Առարկայական (մասնագիտական) կոմպետենցիաներ (ԱԿ)

ԱԿ6 կարողանա կիրառել տվյալ առարկային բնորոշ մեթոդները,

ԱԿ11 տիրապետեն ինքնուրույն հետազոտության մեթոդներին և կարողանան մեկնաբանել հետազոտության արդյունքները,

մասնագիտական-գործնական (այսուհետ՝ ՄԳԿ)

ՄԳԿ1 ունենա անհրաժեշտ գիտելիքներ, կարողություններ և հմտություններ՝ ժամանակակից կենսաբանության բնագավառում կիրառվող սարքավորումներով աշխատելու համար

ՄԳԿ3 Մասնագիտական հարցերի շրջանականերում ընդունելի որոշումների հասնելու նպատակով երկխոսություն, բանավեճեր վարելու կարողություն

5. Դասընթացի դերը կրթական ծրագրի շրջանավարտների գիտելիքների,

կարողությունների և հմտությունների ձևավորման հարցում ըստ աշխատաշուկայի պահանջների³

«Հայաստանի դեղաբույսեր» դասընթացից ձեռք բերված գիտելիքներն և հմտությունները շրջանավարտը կարող է կիրառել մանկավարժական մասնագիտական գործունեության ընթացքում, դպրոցում, քոլեջում, վարժարանում աշխատելու, նաև մագիստրատուրայում կրթությունը շարունակելու նպատակով:

6.Դասընթացի ծավալը, ուսումնական աշխատանքի տեսակները, արդյունքների ամփոփման ձևերը

| Չափանիշ | Առկա ուսուցման համակարգ | Հեռակա ուսուցման համակարգ |
|---|-------------------------|---------------------------|
| Դասընթացի ընդհանուր աշխատատարությունը (կրեդիտ /ընդհանուր ժամաքանակ) | 2կրեդիտ/60 ժամ | կրեդիտ/ |

| Աշխատանքի տեսակը | Ժամաքանակ | Ժամաքանակ |
|---|-----------|-----------|
| Դասախոսություն | 16 | |
| Գործնական աշխատանք | 12 | |
| Սեմինար պարապմունք | | |
| Լաբորատոր աշխատանք | | |
| Ինքնուրույն աշխատանք | 32 | |
| Ընդամենը | 60 | |
| Ստուգման ձևը (ստուգարք/ ընթացիկ քննություն/ հանրագումարային քննություն) | ստուգարք | |

7.Ուսումնական աշխատանքների տեսակները⁴.

•**Դասախոսությունը** դասախոսի կողմից դասընթացի ծրագրի շրջանակներում գիտական-տեղեկատվական թեմայի վերաբերյալ տրամաբանորեն կառուցված, հետևողական ու պարզ խոսքի շարադրանքն է, որի նպատակն է ուսանողին տալ համապարփակ գիտելիքներ: Դասախոսը վերլուծում, մեկնաբանում է թեմայի առավել կարևոր, դժվար ընկալելի, հանգուցային հարցերը: Դասախոսությունը ուսանողի առջև ուրվագծվող գիտական մի ճանապարհ է, որը նա կարող է միայն անցնել գիտական գրականության ընթերցանության, ուսումնական բնույթի այլ պարապմունքների և ինքնուրույն կատարած աշխատանքների շնորհիվ: Դասախոսը պետք է խթանի ուսանողի ակտիվ իմացաբանական գործունեությունը, նպաստի նրանց ստեղծագործական մտածողության ձևավորմանը: Ուսանողը նույնպես պետք է լինի դասախոսության ակտիվ մասնակից: Ուսանողը դասախոսությանը

³ Նշվում է, թե տվյալ դասընթացի յուրացման, ամփոփման արդյունքում ձեռքբերված գիտելիքները, հմտությունները և կարողությունները աշխատաշուկայի որ բնագավառներում և ոլորտներում կարող է շրջանավարտը կիրառել

⁴ Թողել այն տեսակը, որը տվյալ դասընթացի դասավանդման համար նախատեսված է: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:

ներկայանալուց առաջ պետք է ծանոթացած լինի տվյալ դասին ներկայացվող թեմային, որպեսզի կարողանա մասնակցել ուսումնական գործընթացին:

• **Գործնական աշխատանքների** ժամանակ ուսանողը կատարում է լսարանային աշխատանք՝ դասախոսի անմիջական ղեկավարման ներքո: Գործնական պարապմունքները անցկացվում են գործնական առաջադրանքների իրականացման, թեստերի, խմբային աշխատանքների, տնային առաջադրանքների, ինտերակտիվ ուսուցման միջոցով՝ տեսական գիտելիքները կիրառելու, գործնական ունակությունների և հմտությունների ձեռքբերման և ամրապնդման նպատակով: Դասախոսն առաջադրում է գործնական պարապմունքների թեման, նպատակը, խնդիրները, այն հարցերը, որոնք պետք է կատարել գործնական պարապմունքի ընթացքում, գործնական պարապմունքի անցկացման մեթոդները և պատասխանում է ուսանողների տված հարցերին:

• **Ինքնուրույն աշխատանքը** ուսանողների ուսումնական, գիտահետազոտական աշխատանքն է, որն իրականացվում է դասախոսի առաջադրանքով և մեթոդական ղեկավարությամբ, բայց առանց նրա անմիջական ղեկավարության:

Ինքնուրույն աշխատանքի տեսակներն են⁵

▪ **Ռեֆերատ** – ուսանողների ինքնուրույն գրավոր, որտեղ ուսանողը շարադրում է որևէ հարցի կամ թեմայի էությունը՝ հենվելով գրական աղբյուրների վրա (դասագրքեր, ձեռնարկներ և այլն):

▪ **Ինքնուրույն աշխատանք համացանցում** – նոր տեղեկատվական տեխնոլոգիաները կարող են օգտագործվել հետևյալ նպատակներով՝ համացանցում անհրաժեշտ տեղեկատվության որոնման համար, երկխոսություն համացանցում, թեմատիկ ցանցային էջերի օգտագործում:

▪ **Աշխատանքային տետր** – նախատեսված է ուսանողների ինքնուրույն աշխատանքների համար և թույլ է տալիս գնահատել ուսումնական նյութի յուրացման աստիճանն ուսանողների կողմից:

▪ **Հարցազրույց** – վերահսկողության միջոց, որը կազմակերպվում է որպես հատուկ զրույց դասավանդողի և ուսանողների միջև՝ կապված այնպիսի թեմայի հետ ինչպիսին կարգապահությունն է, և նախատեսված է հստակեցնել ուսանողների գիտելիքների շրջանակը կոնկրետ թեմայի, հարցի վերաբերյալ:

8.Դասավանդման մեթոդներներն են⁶ հիմնահարցային դասախոսություն, դասախոսություն-երկխոսություն, դասախոսություն-քննարկում, գործնական աշխատանք անհատական աշխատանք, գործնական աշխատանք խմբային աշխատանք:

9.Ուսումնառության մեթոդներն են⁷ թիմային քննարկում, իրադրությունների վերլուծություն, աղյուսակների և դասակարգման համեմատման և համակարգման սխեմաների կազմում, փորձի/հետազոտության արդյունքների վերաբերյալ եզրակացության ներկայացում.

⁵ Թողել այն տեսակը, որը տվյալ դասընթացի դասավանդման համար նախատեսված է: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:

⁶ Ներկայացված են օրինակներ: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:

⁷ Ներկայացված են օրինակներ: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:

10. Դասընթացի համառոտ բովանդակությունը, ուսումնական աշխատանքի ծավալը՝ ըստ բաժինների և թեմաների⁸.

| h/h | Թեմա (բաժին) | Ուսումնական աշխատանքի ժամաքանակն ըստ տեսակների | | | | |
|-----------------|---|---|------------------------|-----------------------|-----------------------|-------------------------|
| | | դասավանդում | սեմինար պարապրնունք | գործնական աշխատանք | լաբորատոր աշխատանք | Ինքնուրույն աշխատանք |
| 1. | Հայաստանի դեղաբույսեր դասընթացի նպատակը, խնդիրները, ուսումնասիրման մեթոդները: Ալկալոիդներ պարունակող դեղաբույսեր, | 2 | | | | 4 |
| 2. | Տերպենոիդներ պարունակող դեղաբույսեր, | 2 | | 2 | | 4 |
| 3. | Յուղեր, պոլիսախարիդներ և օսլա պարունակող դեղաբույսեր | 2 | | 2 | | 4 |
| 4. | Լորձ և ինուլին պարունակող դեղաբույսեր | 2 | | 2 | | 4 |
| 5. | Վիտամիններ պարունակող դեղաբույսեր, | 2 | | 2 | | 4 |
| 6. | Գլիկոզիդներ պարունակող դեղաբույսեր | 2 | | 2 | | 4 |
| 7. | Դաբաղանյութեր, ֆլավոնոիդներ, ֆենոլային միացություններ պարունակող դեղաբույսեր: | 2 | | 2 | | 4 |
| 8. | Դեղաբույսերի դասակարգումը ըստ հիմնական դեղաբանական ազդեցության և հիվանդությունների: Դեղաբույսերի ընտրությունը, հավաքը, չորացումը, պահեստավորման եղանակները: | 2 | | | | 4 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | 16 | | 12 | | 32 |

11. Ուսումնամեթոդական գրականության ապահովման քարտ

⁸ Նման է օրացուցային պլանին

| h/h | Անվանումը/հեղինակ | Հրատարակության տարի |
|---|---|---------------------|
| Հիմնական գրականություն (ՀԳ) | | |
| 1. | Եղիկյան Ս. - Ժողովրդական բժշկություն, Ե., Հայաստան հրատ., | 2007 |
| 2. | Թորոսյան Ա.- Հայաստանի դեղաբույսերը, Ե., Հայաստան հրատ., | 1983 |
| 3. | Հովհաննիսյան Ջ.- Կանաչ դեղատուփ, Ե., Ջանգակ-97 | 2005 |
| 4. | Ղուկասյան Է.- Բուժում դեղաբույսերով, Ե., «Նարեկացի» | 1992 |
| 5. | Հարությունյան Հ. Ս.- Միջնադարյան Հայկական բժշկարանների դեղաբույսերը, Երևան, | 1990 |
| Լրացուցիչ գրականություն(ԼԳ) | | |
| 1. | Муравьёва Д.А.; Самылина И.А.; Яковлев Г.П. –Фармакогнозия | 2002 |
| 2. | Магомедов А.М.; Мургузалиев Р.А.- Лекарственные растения и их применение в медицине | 2012 |
| 3. | Куркин В.А.– Фармакогнозия | 2004 |
| Համացանցային տեղեկատվական պաշարներ (ՀՏՊ)/ Էլեկտրոնային աղբյուրներ (ԷԱ) | | |

12. Դասընթացի ուսումնամեթոդական քարտ

12.1. Դասախոսությունների ուսումնամեթոդական քարտ

| h/h | Թեմա | Ուսումնասիրվող հարցեր | Ժամաքանակ | Գրականություն ⁹ |
|-----|---|--|-----------|----------------------------|
| 1. | Հայաստանի դեղաբույսեր դասընթացի նպատակը, խնդիրները, ուսումնասիրման մեթոդները: Ալկալոիդներ պարունակող դեղաբույսեր, | Ծանոթանալ Հայաստանի դեղաբույսեր դասընթացի հիմնական խնդիրների հետ, դեղաբույսերի ծագման և զարգացման պատմության հետ: Հասկացողություն դեղաբույսերի կենսաբանական ակտիվ նյութերի մասին: Կենսաբանական ակտիվ նյութերի տեղակայումը բույսերի տարբեր օրգաններում: Ալկալոիդներ պարունակող դեղաբույսերի քիմիական կազմը, տեսակները, բույսի մեջ բաշխումը (բջջում և տարբեր օրգաններում): Ալկալոիդների կենսաբանական դերը բույսի համար և դրա ազդեցությունը մարդու օրգանիզմի վրա: | 2 | ՀԳ 2- 5, ԼԳ 3 |
| 2. | Տերպենոիդներ պարունակող դեղաբույսեր, | Տերպենոիդներ պարունակող դեղաբույսեր, քիմիական կազմը, տեսակները, բույսի մեջ բաշխումը (բջջում և տարբեր օրգաններում): Տերպենոիդների և յուղերի կենսաբանական դերը բույսի համար և դրա ազդեցությունը մարդու օրգանիզմի վրա: | 2 | ՀԳ 2- 5, ԼԳ 3 |
| 3. | Յուղեր, պոլիսախարիդներ և օսլա պարունակող դեղաբույսեր, | Յուղեր պարունակող դեղաբույսեր, քիմիական կազմը, տեսակները, բույսի մեջ բաշխումը (բջջում և տարբեր օրգաններում): Յուղերի կենսաբանական դերը բույսի համար և դրա ազդեցությունը մարդու օրգանիզմի վրա: Եթերայուղատու դեղաբույսեր: Պոլիսախարիդներ և օսլա պարունակող դեղաբույսեր, քիմիական կազմը, տեսակները, բույսի մեջ բաշխումը (բջջում և տարբեր օրգաններում): Դրանց | 2 | ՀԳ 2- 5, ԼԳ 3 |

⁹ Ըս15.տ 12-րդ կետում նշված ցանկի, օր.՝ ՀԳ 1, ԼԳ 2 և այլն

| | | | | |
|----|--|--|---|---------------|
| | | կենսաբանական դերը բույսի համար և դրա ազդեցությունը մարդու օրգանիզմի վրա: | | |
| 4. | Լորձ և ինուլին պարունակող դեղաբույսեր | Լորձ և ինուլին պարունակող դեղաբույսեր, քիմիական կազմը, տեսակները, բույսի մեջ բաշխումը (բջջում և տարբեր օրգաններում): Դրանց կենսաբանական դերը բույսի համար և դրա ազդեցությունը մարդու օրգանիզմի վրա: | 2 | ՀԳ 2- 5, ԼԳ 3 |
| 5. | Վիտամիններ պարունակող դեղաբույսեր, | Վիտամիններ պարունակող դեղաբույսեր, քիմիական կազմը, տեսակները, բույսի մեջ բաշխումը (բջջում և տարբեր օրգաններում): Վիտամինների կենսաբանական դերը բույսի համար և դրա ազդեցությունը մարդու օրգանիզմի վրա: | 2 | ՀԳ 2- 5, ԼԳ 3 |
| 6. | Գլիկոզիդներ պարունակող դեղաբույսեր | Գլիկոզիդներ պարունակող դեղաբույսեր, քիմիական կազմը, տեսակները, բույսի մեջ բաշխումը (բջջում և տարբեր օրգաններում): Գլիկոզիդների կենսաբանական դերը բույսի համար և դրա ազդեցությունը մարդու օրգանիզմի վրա: | 2 | ՀԳ 2- 5, ԼԳ 3 |
| 7. | Դաբաղանյութեր, ֆլավոնոիդներ, ֆենոլային միացություններ պարունակող դեղաբույսեր | Դաբաղանյութեր, ֆլավոնոիդներ, ֆենոլային միացություններ պարունակող դեղաբույսեր, քիմիական կազմը, տեսակները, բույսի մեջ բաշխումը (բջջում և տարբեր օրգաններում): Դրանց կենսաբանական դերը բույսի համար և դրա ազդեցությունը մարդու օրգանիզմի վրա: | 2 | ՀԳ 2- 5, ԼԳ 3 |
| 8. | Դեղաբույսերի ընտրությունը, հավաքը, չորացումը, պահեստավորման եղանակները: | Դեղաբույսերի դասակարգումը ըստ հիմնական դեղաբանական ազդեցության և հիվանդությունների: Բժշկության մեջ բուսական հումքի օգտագործման | 2 | ՀԳ 2- 5, ԼԳ 3 |

| | | | | |
|--|--|--|--|--|
| | | <p>ուղիները: Բուսաբուծության նշանակությունը տարբեր հիվանդությունների բուժման համար: Հայաստանում բուժումը դեղաբույսերով: Դեղաբույսերի ընտրությունը, հավաքը, չորացումը, պահեստավորման եղանակները: Ընդհանուր տեղեկություններ դեղաբուսական հումքի ճշգրիտ հավաքի, (դեղաբույսի տարբեր մասերի) չորացման և պատշաճ պահպանման մասին: Դեղաբուսական հումքից դեղաձևերի պատրաստման եղանակները:</p> | | |
|--|--|--|--|--|

12.2. Գործնական աշխատանքների /սեմինար պարապմունքների ուսումնամեթոդական քարտ

| h/h | Թեմա | Ուսումնասիրվող հարցեր | Ժամաքանակ | Մտուցման ձևը | Գրականություն ¹⁰ |
|-----|---|---|-----------|--|-----------------------------|
| 1. | Հայաստանի դեղաբույսեր դասընթացի նպատակը, խնդիրները, ուսումնասիրման մեթոդները: | Դեղաբույսերի ուսումնասիրման և օգտագործման պատմական փուլերը: Դեղաբույսերի դասակարգման սկզբունքները: Բնական և մշակովի դեղաբույսերի ռացիոնալ օգտագործումը: | 2 | գնահատվում է գործնական աշխատանքի կատարման կարողությունները և տնային աշխատանքների կատարման արդյունքները | ՀԳ 1,4, ԼԳ 2 |

¹⁰ Ըստ 12-րդ կետում նշված ցանկի, օր.՝ ՊԳ 1, ԼԳ 2 և այլն

| | | | | | |
|----|---|---|---|--|--------------|
| 2. | Ալկալոիդներ, տերպենոիդներ պարունակող դեղաբույսեր, | Ալկալոիդներ պարունակող դեղաբույսերի տարածվածությունը, տեսակները: Այդ բույսերի կիրառությունները և տարբեր միջոցներ պատրաստելու եղանակները: Տերպենոիդներ պարունակող դեղաբույսերի տարածվածությունը, տեսակները: Այդ բույսերի կիրառությունները և տարբեր միջոցներ պատրաստելու եղանակները: Եթերայուղատու բույսերի տեսակները և նշանակությունը: | 2 | գնահատվում է գործնական աշխատանքի կատարման կարողությունները և տնային աշխատանքների կատարման արդյունքները | ՀԳ 1,4, ԼԳ 2 |
| 3. | Յուղեր պարունակող դեղաբույսեր, Պոլիսախարիդներ և օսլա պարունակող դեղաբույսեր | Յուղեր պարունակող դեղաբույսերի տարածվածությունը, տեսակները: Այդ բույսերի կիրառությունները և տարբեր միջոցներ պատրաստելու եղանակները: Պոլիսախարիդներ և օսլա պարունակող դեղաբույսերի տարածվածությունը, տեսակները: Այդ բույսերի կիրառությունները և տարբեր միջոցներ պատրաստելու եղանակները: | 2 | գնահատվում է գործնական աշխատանքի կատարման կարողությունները և տնային աշխատանքների կատարման արդյունքները | ՀԳ 1,4, ԼԳ 2 |
| 4. | Վիտամիններ պարունակող դեղաբույսեր | Վիտամիններ պարունակող դեղաբույսեր, քիմիական կազմը, տեսակները, բույսի մեջ բաշխումը (բջջում և տարբեր օրգաններում): Վիտամինների կենսաբանական դերը բույսի համար և դրա ազդեցությունը մարդու օրգանիզմի վրա: | 2 | գնահատվում է գործնական աշխատանքի կատարման կարողությունները և տնային աշխատանքների կատարման | ՀԳ 1,4, ԼԳ 2 |

| | | | | | |
|----|---|--|---|--|--------------|
| | | | | արդյունքները | |
| 5. | Գլխկոզիդներ պարունակող դեղաբույսեր: Դաբադանյութեր, Ֆլավոնոիդներ, ֆենոլային միացություններ պարունակող դեղաբույսեր | Գլխկոզիդներ պարունակող դեղաբույսեր, քիմիական կազմը, տեսակները, բույսի մեջ բաշխումը (բջջում և տարբեր օրգաններում): Գլխկոզիդների կենսաբանական դերը բույսի համար և դրա ազդեցությունը մարդու օրգանիզմի վրա: Դաբադանյութեր, Ֆլավոնոիդներ, ֆենոլային միացություններ պարունակող դեղաբույսեր, քիմիական կազմը, տեսակները, բույսի մեջ բաշխումը (բջջում և տարբեր օրգաններում): Դրանց կենսաբանական դերը բույսի համար և դրա ազդեցությունը մարդու օրգանիզմի վրա: | 2 | գնահատվում է գործնական աշխատանքի կատարման կարողությունները և տնային աշխատանքների կատարման արդյունքները | ՀԳ 1,4, ԼԳ 2 |
| 6. | Լորձ և ինուլին պարունակող դեղաբույսեր: Դեղաբույսերի դասակարգումը ըստ հիմնական դեղաբանական ազդեցության և հիվանդությունների: | Լորձ և ինուլին պարունակող դեղաբույսերի տարածվածությունը, տեսակները: Այդ բույսերի կիրառությունները և տարբեր միջոցներ պատրաստելու եղանակները: Բժշկության մեջ բուսական հումքի օգտագործման ուղիները: Բուսաբուծության նշանակությունը տարբեր հիվանդությունների բուժման համար: Հայաստանում բուժումը դեղաբույսերով: | 2 | գնահատվում է գործնական աշխատանքի կատարման կարողությունները և տնային աշխատանքների կատարման արդյունքները | ՀԳ 1,4, ԼԳ 2 |

12.3 Ինքնուրույն աշխատանքների ուսումնամեթոդական քարտ

| h/h | Ինքնուրույն աշխատանքի թեմաները | Ուսումնասիրվող հարցեր | Աշխատանքի տեսակը ¹¹ | Ներկայացման ժամկետները | Ստուգման ձևը | Գրականություն ¹² |
|-----|---|--|--------------------------------|------------------------|--------------------------------------|---------------------------------|
| 1. | Սիրտ-անոթային համակարգի խնդիրների բուժման համար կիրառվող դեղաբույսեր: | Նկարագրել մի քանի դեղաբույսեր, որոնք օգտագործվում են սիրտ-անոթային խնդիրների ժամանակ, տալ դրանց աճման, զարգացման առանձնահատկությունները, հավաքման և չորացման պայմանները, կիրառման եղանակները և հակացուցումները: | ռեֆերատ, պրեզենտացիա | Կիսամյակի ընթացքում | Ռեֆերատի ներկայացում, պաշտպանություն | Նշված բոլոր գրական աղբյուրներից |
| 2. | Երիկամային տարբեր հիվանդությունների բուժման համար կիրառվող դեղաբույսեր: | Նկարագրել մի քանի դեղաբույսեր, որոնք օգտագործվում են երիկամների բորբոքումների ժամանակ, տալ դրանց աճման, զարգացման առանձնահատկությունները, հավաքման և չորացման պայմանները, կիրառման եղանակները և հակացուցումները: | ռեֆերատ, պրեզենտացիա | Կիսամյակի ընթացքում | Ռեֆերատի ներկայացում, պաշտպանություն | Նշված բոլոր գրական աղբյուրներից |

¹¹ Տես 7-րդ կետի հինգերորդ պարբերությունը

¹² Ըստ 12-րդ կետում նշված ցանկի, օր. չԳ 1, ԼԳ 2 և այլն

| | | | | | | |
|----|---|---|----------------------|---------------------|--------------------------------------|---------------------------------|
| 3. | Շաքարային դիաբեդի բուժման համար (հիպոգլիկեմիկ) կիրառվող դեղաբույսեր: | Նկարագրել մի քանի դեղաբույսեր, որոնք օգտագործվում են շաքարային դիաբեդի ժամանակ, տալ դրանց աճման, զարգացման առանձնահատկությունները, հավաքման և չորացման պայմանները, կիրառման եղանակները և հակացուցումները: | ռեֆերատ, պրեզենտացիա | Կիսամյակի ընթացքում | Ռեֆերատի ներկայացում, պաշտպանություն | Նշված բոլոր գրական աղբյուրներից |
| 4. | Հիպերտոնիկ հիվանդությունների բուժման համար, կիրառվող դեղաբույսեր, որոնք նաև կարգավորում են արյան ճնշումը: | Նկարագրել մի քանի դեղաբույսեր, որոնք գտագործվում են հիպերտոնիկ հիվանդությունների ժամանակ, տալ դրանց աճման, զարգացման առանձնահատկությունները, հավաքման և չորացման պայմանները, կիրառման եղանակները և հակացուցումները: | ռեֆերատ, պրեզենտացիա | Կիսամյակի ընթացքում | Ռեֆերատի ներկայացում, պաշտպանություն | Նշված բոլոր գրական աղբյուրներից |
| 5. | Դեղաբույսեր, որոնք համարվում են հակավիրուսային և օգտագործվում են վիրուսային հիվանդությունների բուժման համար | Նկարագրել մի քանի դեղաբույսեր, որոնք համարվում են հակավիրուսային, տալ դրանց աճման, զարգացման առանձնահատկությունները, հավաքման և չորացման պայմանները, կիրառման եղանակները և հակացուցումները: | ռեֆերատ, պրեզենտացիա | Կիսամյակի ընթացքում | Ռեֆերատի ներկայացում, պաշտպանություն | Նշված բոլոր գրական աղբյուրներից |

| | | | | | | |
|----|--|---|----------------------|---------------------|--------------------------------------|---------------------------------|
| 6. | Աղետամոքսային հիվանդությունների բուժման համար կիրառվող դեղաբույսեր: | Նկարագրել մի քանի դեղաբույսեր, որոնք օգտագործվում են աղետամոքստային տրակտի հիվանդությունների ժամանակ, տալ դրանց աճման, զարգացման առանձնահատկությունները, հավաքման և չորացման պայմանները, կիրառման եղանակները և հակացուցումները: | ռեֆերատ, պրեզենտացիա | Կիսամյակի ընթացքում | Ռեֆերատի ներկայացում, պաշտպանություն | Նշված բոլոր գրական աղբյուրներից |
| 7. | Գլխացավերի բուժման համար կիրառվող դեղաբույսեր, որոնք նաև կարգավորում են արյան ճնշումը: | Նկարագրել մի քանի դեղաբույսեր, որոնք օգտագործվում են գլխացավերի ժամանակ, տալ դրանց աճման, զարգացման առանձնահատկությունները, հավաքման և չորացման պայմանները, կիրառման եղանակները և հակացուցումները: | ռեֆերատ, պրեզենտացիա | Կիսամյակի ընթացքում | Ռեֆերատի ներկայացում, պաշտպանություն | Նշված բոլոր գրական աղբյուրներից |

| | | | | | | |
|-----|--|--|----------------------|---------------------|--------------------------------------|---------------------------------|
| 8. | Լյարդի և լեղապարկի բորբոքումների բուժման համար կիրառվող դեղաբույսեր: | Նկարագրել մի քանի դեղաբույսեր, որոնք օգտագործվում են լյարդի և լեղապարկի բորբոքումների ժամանակ, տալ դրանց աճման, զարգացման առանձնահատկությունները, հավաքման և չորացման պայմանները, կիրառման եղանակները և հակացուցումները: | ռեֆերատ, պրեզենտացիա | Կիսամյակի ընթացքում | Ռեֆերատի ներկայացում, պաշտպանություն | Նշված բոլոր գրական աղբյուրներից |
| 9. | Մրսածության դեմ կիրառվող դեղաբույսեր: | Նկարագրել մի քանի դեղաբույսեր, որոնք օգտագործվում են մրսածության ժամանակ, տալ դրանց աճման, զարգացման առանձնահատկությունները, հավաքման և չորացման պայմանները, կիրառման եղանակները և հակացուցումները: | ռեֆերատ, պրեզենտացիա | Կիսամյակի ընթացքում | Ռեֆերատի ներկայացում, պաշտպանություն | Նշված բոլոր գրական աղբյուրներից |
| 10. | Կնի հանգստացնող և սեղատիվ (հանգստացնող), ազդեցություն ունեցող դեղաբույսեր: | Նկարագրել մի քանի դեղաբույսեր, որոնք ունեն հանգստացնող ազդեցություն, տալ դրանց աճման, զարգացման առանձնահատկությունները, հավաքման և չորացման պայմանները, կիրառման եղանակները և հակացուցումները: | ռեֆերատ, պրեզենտացիա | Կիսամյակի ընթացքում | Ռեֆերատի ներկայացում, պաշտպանություն | Նշված բոլոր գրական աղբյուրներից |

13. Դասընթացի նյութատեխնիկական միջոցների ապահովում¹³

| Ռեսուրսի անվանումը | Ռեսուրսի անվանումը, քանակը, նկարագրությունը (անհրաժեշտության դեպքում) |
|--------------------------------------|---|
| Լսարան (հատուկ կահավորմամբ) | Դասախոսությունների համար պոռեկտորներով և էլեկտրոնային գրատախտակներով համալրված լսարաններ, լաբորատոր և գործնական աշխատանքների համար՝ համապատասխան լաբորատորիաներ |
| Նյութեր լաբորատոր աշխատանքների համար | Լաբորատոր աշխատանքների մեթոդական ցուցումներում ներառված նյութերը և սարքավորումները |
| Մարքեր, սարքավորումներ | պոռեկտոր |
| Համակարգչային ծրագրեր | |
| Այլ | ՎՊՀ-ի գրադարանը, այդ թվում նաև էլեկտրոնային ռեսուրսները |

¹³ Նշվում են սարք-սարքավորումների, համակարգչային ծրագրերի նկարագրությունները և քանակը, որոնք անհրաժեշտ են տվյալ դասընթացի ուսումնական գործընթացը կազմակերպելու համար

14. Գնահատում

Համալսարանում գործում է բակալավրիատի, մագիստրատուրայի և ասպիրանտուրայի ուսանողների գիտելիքների պարբերական ստուգման և գնահատման բազմագործոնային համակարգ, որի կիրառման հիմնական նպատակներն են՝

- կազմակերպել ուսումնառության համաչափ աշխատանքային գործընթաց, ապահովել գիտելիքների համակողմանի ստուգում, խթանել ուսանողի ինքնուրույն աշխատանքը,
- իրականացնել ինքնուրույն առաջադրանքների, ընթացիկ ստուգումների (ստուգարքներ և քննություններ), ուսումնական գործընթացի այլ բաղադրիչների հաշվառում հետադարձ կապի արդյունավետ մեխանիզմների ներմուծման միջոցով՝ ի նպաստ ուսումնառության գործընթացի բարելավման:

Համալսարանում գնահատման գործընթացը կանոնակարգվում է համաձայն գործող կարգի¹⁴:

14.1. Գիտելիքների ստուգման և գնահատման բաղադրիչներն են՝

- գործնական (սեմինար) աշխատանքների ընթացքում նրա ակտիվության և հմտությունների հաշվառում և գնահատում ընթացիկ ստուգումների միջոցով՝ առավելագույնը գումարային 40 միավոր,
- ինքնուրույն աշխատանքների (անհատական առաջադրանքներ) հաշվառում և գնահատում առավելագույնը գումարային 20 միավոր,
- դասընթացի ենթաբաժինների և ծրագրով նախատեսված այլ առաջադրանքների կատարման և յուրացման ընթացիկ ստուգում և գնահատում կիսամյակի ընթացքում (ընթացիկ քննություններ կամ ստուգարքներ)՝ առավելագույնը գումարային 40 միավոր,
- ստուգման արդյունքների ամփոփում գնահատման նշված բաղադրիչների արդյունքների հիման վրա և դասընթացի արդյունարար գնահատականի ձևավորում՝ առավելագույնը գումարային 100 միավոր:

14.2. Ուսանողների գիտելիքների ստուգում.

Ստուգարքով ամփոփվող դասընթացն ավարտվում է կիսամյակի 2 ստուգումների միջոցով և մյուս բաղադրիչների գնահատումների արդյունքներով:

14.3. Հարցաշար (ըստ ծրագրի)

1. Հայաստանի դեղաբույսեր դասընթացի նպատակը, խնդիրները, ուսումնասիրման մեթոդները:
2. Դեղաբույսերի դասակարգման սկզբունքները:
3. Դեղաբույսերի ուսումնասիրման և օգտագործման պատմական փուլերը:
4. Դեղաբույսերի զարգացման պատմական ակնարկ:
5. Հասկացողություն դեղաբույսերի կենսաբանական ակտիվ նյութերի մասին:
6. Դեղաբույսերի քիմիական կազմը: Դեղաբույսերի ազդող նյութերը:
7. Քիմիական կազմի փոփոխությունը օստոգենեզի ընթացքում և միջավայրի գործոնների ազդեցության հետևանքով:
8. Դեղաբույսերի տարածվածությունը տարբեր ֆիտոցենոզներում:

¹⁴«Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ուսանողների գիտելիքների ստուգման, գնահատման և հաշվառման կանոնակարգ»

9. Դեղաբույսերի դասակարգումը, կենսաբանական ակտիվ նյութերի դասակարգումը:
10. Կենսաբանական ակտիվ նյութերի տեղակայումը բույսերի տարբեր օրգաններում:
11. Դեղաբույսի կարգաբանական պատկանելիությունը: Դեղաբույսերի հայերեն, լատիներեն անվանումները:
12. Դեղաբույսերի բուսաբանական բնութագիրը, աճման վայրը, էկոլոգիական առանձնատկությունները:
13. Ալկալոիդներ պարունակող դեղաբույսեր
14. Տերպենոիդներ պարունակող դեղաբույսեր
15. Յուղեր պարունակող դեղաբույսերը
16. Պոլիսախարիդներ պարունակող դեղաբույսերը
17. Ինուլին պարունակող դեղաբույսերը
18. Օսլա պարունակող դեղաբույսերը
19. Լորձ և պեկտինային նյութեր պարունակող բույսեր
20. Վիտամիններ պարունակող դեղաբույսեր
21. Գլիկոզիդներ պարունակող դեղաբույսեր
22. Ֆենոլային միացություններ և ֆլավոնոիդներ պարունակող դեղաբույսեր
23. Դաբադանյութ պարունակող դեղաբույսեր
24. Դեղաբույսերի ընտրությունը, հավաքը, չորացումը, պահեստավորման եղանակները:
25. Բուսական հումքի հավաք, չորացում, մշակում: Բժշկության մեջ բուսական հումքի օգտագործման ուղիները:
26. Դեղաբույսերի հիմնական խմբերը
27. Դեղաբույսերի կիրառման եղանակները
28. Դեղաբույսերն իրենց ազդեցության բնույթի (ծայրամասային նյարդային համակարգի, սիրտանոթային համակարգի, շնչառական օրգանների ֆունկցիայի, մարսողության օրգանների ֆունկցիայի, երիկամների միզարտադրության ֆունկցիայի, արյան և արյունաստեղծման, հյուսվածքներում նյութափոխանակության, հյուսվածքներում ախտաբանական, հակամանրէային, հակամակարուծական: միզամուղ, խորխաբեր, կնի հանգստացնող, արյունահոսությունը կանգնեցնող, հակաբորբոքային, հակախոցային, լեղամուղ, մարսողությունը լավացնող, լուծողական, ցավազրկող, պազմոլիտիկ, սեղատիվ, ջերմիջեցնող, շաքարային դիաբեդի, հիպերտոնիկ հիվանդությունների, անքնության, ախորժաբեր, առիթմիայի և այլն):
29. Դեղաբույսերում քիմիական նյութերի դասակարգումը (ֆիզիոլոգիապես ակտիվ նյութեր, ուղեկցող և բալաստային նյութեր)
30. Դեղաբուսական հումքից դեղաձևերի հիմնական տեսակները. բուսական թեյ, ջրաթուրմ, եփուկ, ոգեթուրմեր, էքստրակտ, հավաքներ, էմուլսիաներ, քսուքներ, կրեմներ, թարմ հյութեր, թրջոցներ, ողողումներ, փոշիներ և այլն:

Գնահատման չափանիշները¹⁵.

- Տեսական գիտելիքները գնահատվում են հարց ու պատասխանի ձևով, քննության ժամանակ գրավոր եղանակով:
- Գործնական աշխատանքները գնահատվում են գործնական պարապմունքների ժամանակ հանձնարարությունների կատարման միջոցով:
- Ինքնուրույն աշխատանքի համար դասընթացի սկզբին ուսանողն ընտրում է նախապես տրված թեմաները, որի շուրջ կատարում է իր աշխատանքը
- Տեսական գիտելիքների գնահատման չափանիշները. 20 միավոր
 - տեսական նյութի իմացություն` վերարտադրման մակարդակով,

¹⁵ Լրացվում է ըստ ամբիոնի /դասախոսի որոշման

▪ առաջադրված հարցերի պատասխանի բովանդակություն, ներկայացման տրամաբանական հաջորդականություն, ամբողջություն, ճշտություն, սեփական տեսակետի հիմնավորման աստիճան,

▪ տեսական նյութի յուրացման աստիճան՝ գործնական աշխատանքների կատարման տեսանկյունից:

➤ **Գործնական աշխատանքների գնահատման չափանիշները (4 ստուգում, յուրաքանչյուրը գնահարվում է առավելագույնը 10 միավոր՝ գումարային առավելագույնը 40 միավոր).**

- հանձնարարության կատարում և կատարման որակ,
- մասնակցություն լսարանային քննարկումներին,
- հերքարիումային և թարմ բույսերի ճանաչման կարողություններ,
- գործնական աշխատանքները ճիշտ կատարելու և մեկնաբանելու կարողություններ:

➤ **Ինքնուրույն աշխատանքի գնահատման չափանիշները (2 ինքնուրույն աշխատանք, յուրաքանչյուրը գնահարվում է առավելագույնը 10 միավոր՝ գումարային առավելագույնը 20 միավոր).**

✓ անհատական աշխատանքի առաջին տեսակի՝ ռեֆերատի, ներկայացում էլեկտրոնային տեսքով,

✓ ռեֆերատում ներկայացված նյութի համապատասխանություն առաջադրված թեմայի հետ,

✓ ռեֆերատի ձևակերպման որակ (գրագիտության ընդհանուր մակարդակ, շարադրման ոճ, լուսաբանումների որակ, տեղեկատվական աղբյուրների օգտագործման մշակույթ),

✓ համացանցի տեղեկատվական աղբյուրների օգտագործում,

✓ ռեֆերատի համառոտ բանավոր ներկայացում, բանավոր խոսքի և թեմայի քննարկման մակարդակ;

ԴԱՍԸՆԹԱՅԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐԻՉ

| | |
|----------------------|--|
| Մասնագիտություն` | <u>011401.00.6 Մասնագիտական մանկավարժություն</u> <i>/դասիչ, մասնագիտության լրիվ անվանումը/</i> |
| Կրթական ծրագիր` | <u>011401.01.6 Կենսաբանություն</u> <i>/դասիչ, կրթական ծրագրի լրիվ անվանումը/</i> |
| Որակավորման աստիճան` | <u>Մանկավարժության բակալավր</u> <i>/բակալավր, մագիստրատուրա/</i> |

Վանաձոր 2026

Առկա ուսուցման համակարգ

| | | | | |
|--|--|----|--------------------|----|
| Դասընթացի թվանիշը, անվանումը | ՔԿ/բ-167–Հայաստանի դեղաբույսեր | | | |
| Դասընթացին հատկացվող կրեդիտը | 2 կրեդիտ | | | |
| Ուսումնառության տարի / կիսամյակ | 4-րդ տարի, 2-րդ կիսամյակ | | | |
| Ժամերի բաշխումը | Լսարանային | 28 | Դասախոսություն | 16 |
| | | | Մեմինար | |
| | | | Լաբորատոր աշխատանք | |
| | | | Գործնական աշխատանք | 12 |
| | Ինքնուրույն | 32 | | |
| | Ընդամենը | 60 | | |
| Ստուգման ձևը | Ընթացիկ քննություններ | | | |
| Դասընթացի նպատակը | «Հայաստանի դեղաբույսեր» դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել գիտելիքներ Հայաստանում հանդիպող դեղաբույսերի վերաբերյալ, այդ բույսերի օգտակարության նաև վնասակարության վերաբերյալ, քանի որ դեղաբույսերի մեջ պարունակվում են տարբեր քիմիական նյութեր, որոնք կարող են հակացուցված լինել, նաև ծանոթացնել այդ դեղաբույսերի աճելավայրի, և հավաքման ժամանակահատվածների հետ, այն չորացնելու և որպես դեղաբույսային հումք պատրաստելու հետ: | | | |
| Դասընթացի վերջնարդյունքները | <p>Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.</p> <p>Գիտելիք</p> <ul style="list-style-type: none"> - Հայաստանում տարածված դեղաբույսերի մասին, - դեղաբույսերում առկա կենսաբանական ակտիվ նյութերի մասին: -տվյալ դեղաբույսը որ դեպքում է կարելի օգտագործել: -պետական միջոցառումների համակարգի՝ դեղաբույսերի ռացիոնալ օգտագործման և պահպանության ուղղությամբ; -գիտական տվյալներ բժշկության մեջ օգտագործվող դեղաբույսերի տարածման արեալների մասին; - դեղաբույսերի հումքային բազայի, կենսաբանական ակտիվ նյութերի կուտակման վրա ազդող էկոլոգիական գործոնները; - դեղաբույսերի հետ աշխատելիս անվտանգության տեխնիկայի կանոնները; <p>Հմտություն</p> <ul style="list-style-type: none"> - դեղաբույսերի չորացման և հավաքման մեթոդներին, -դեղաբույսերի օգտակարության և հակացուցումների մասին տեղեկություններին, - դեղաբույսերի բնագավառում գործնական հմտություններին, - փորձարարական աշխատանքների կատարման մեթոդներին, - բնական միջավայրում և մշակության մեջ աճող դեղաբույսերի կենսաբանական, էկոլոգիական հատկություններին վերաբերվող | | | |

| | |
|---|--|
| | <p>գիտելիքներին: Կարողունակություն - դասակարգել դեղաբույսերը ըստ իրենց մեջ պարունակվող նյութերի - դեղաբույսերի մասին ունեցած գիտելիքները կիրառել պրակտիկ գործունեության մեջ, - հանձնարարված գրականության հիման վրա կազմել ռեֆերատներ - ձեռք բերած տեսական գիտելիքները կիրառել գործնականում - տիրապետել դեղաբույսերի ֆիզիոլոգիական գործընթացների ուսումնասիրման մեթոդներին, - կատարել դեղաբույսերի ֆիզիոլոգիական գործընթացների ուսումնասիրման փորձեր, - որոշել հերբարիումային և կենդանի դեղաբույսերը նրանց մորֆոլոգիական հատկանիշներով; - դեղաբույսերից պատրաստել ջրաթուրմ, եփուկ, ոգեթուրմ, հանուկ և այլն:</p> |
| <p>Դասընթացի բովանդակությունը</p> | <p>Թեմա 1. Հայաստանի դեղաբույսեր դասընթացի նպատակը, խնդիրները, ուսումնասիրման մեթոդները: Թեմա 2. Ալկալոիդներ պարունակող դեղաբույսեր, Թեմա 3. Տերպենոիդներ պարունակող դեղաբույսեր, Թեմա 4. Յուղեր պարունակող դեղաբույսեր, Թեմա 5. Պոլիսախարիդներ և օսլա պարունակող դեղաբույսեր Թեմա 6. Լորձ և ինուլին պարունակող դեղաբույսեր Թեմա 7. Վիտամիններ պարունակող դեղաբույսեր, Թեմա 8. Գլիկոզիդներ պարունակող դեղաբույսեր Թեմա 9. Դաբաղանյութեր, ֆլավոնոիդներ, ֆենոլային միացություններ պարունակող դեղաբույսեր Թեմա 10. Դեղաբույսերի դասակարգումը ըստ հիմնական դեղաբանական ազդեցության և հիվանդությունների: Թեմա 11. Դեղաբույսերի ընտրությունը, հավաքը, չորացումը, պահեստավորման եղանակները:</p> |
| <p>Գնահատման մեթոդները և չափանիշները</p> | <p>• Տեսական գիտելիքների գնահատման չափանիշները. 20 միավոր</p> <ul style="list-style-type: none"> ▪ տեսական նյութի իմացություն՝ վերաբրտադրման մակարդակով, ▪ առաջադրված հարցերի պատասխանի բովանդակություն, ներկայացման տրամաբանական հաջորդականություն, ամբողջություն, ճշտություն, սեփական տեսակետի հիմնավորման աստիճան, ▪ տեսական նյութի յուրացման աստիճան՝ գործնական աշխատանքների կատարման տեսանկյունից: <p>➤ Գործնական աշխատանքների գնահատման չափանիշները (4 ստուգում, յուրաքանչյուրը գնահարվում է առավելագույնը 10 միավոր՝ գումարային առավելագույնը 40 միավոր).</p> <ul style="list-style-type: none"> ▪ հանձնարարության կատարում և կատարման որակ, ▪ մասնակցություն լսարանային քննարկումներին, ▪ հերբարիումային և թարմ բույսերի ճանաչման կարողություններ, ▪ գործնական աշխատանքները ճիշտ կատարելու և մեկնաբանելու կարողություններ: <p>➤ Ինքնուրույն աշխատանքի գնահատման չափանիշները (2 ինքնուրույն աշխատանք, յուրաքանչյուրը գնահարվում է առավելագույնը 10 միավոր՝ գումարային առավելագույնը 20 միավոր).</p> |

| | |
|---------------|--|
| | <ul style="list-style-type: none"> ▪ անհատական աշխատանքի առաջին տեսակի՝ ռեֆերատի, ներկայացում էլեկտրոնայաին տեսքով, ✓ ռեֆերատում ներկայացված նյութի համապատասխանություն առաջադրված թեմայի հետ, ✓ ռեֆերատի ձևակերպման որակ (գրագիտության ընդհանուր մակարդակ, շարադրման ոճ, լուսաբանումների որակ, տեղեկատվական աղբյուրների օգտագործման մշակույթ), ✓ համացանցի տեղեկատվական աղբյուրների օգտագործում, ✓ ռեֆերատի համառոտ բանավոր ներկայացում, բանավոր խոսքի և թեմայի քննարկման մակարդակ; <p>Գնահատումը կատարվում է ըստ բուհում գործող «<u>Ուսանողների գիտելիքների ստուգման, գնահատման և հաշվառման կանոնակարգ</u>»</p> |
| Գրականություն | <p>Հիմնական</p> <ol style="list-style-type: none"> 1. Եղիկյան Ս. - Ժողովրդական բժշկություն, Ե., Հայաստան հրատ., 2007 2. Թորոսյան Ա.- Հայաստանի դեղաբույսերը, Ե., Հայաստան հրատ., 1983 3. Հովհաննիսյան Ջ.- Կանաչ դեղատուփ, Ե., Ջանգալ-97, 1990 4. Ղուկասյան Է.- Բուժում դեղաբույսերով, Ե., «Նարեկացի» 1992 5. Հարությունյան Հ. Ս.- Միջնադարյան Հայկական բժշկարանների դեղաբույսերը, Երևան, 2005 <p>Լրացուցիչ-</p> <ol style="list-style-type: none"> 1. Муравьёва Д.А.; Самылина И.А.; Яковлев Г.П. –Фармакогнозия 2002 2. Магомедов А.М.; Муртузалиев Р.А.- Лекарственные растения и их применение в медицине 2004 3. Куркин В.А.– Фармакогнозия , 2012 |